

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ  
2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

**ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ներկայացվում է

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) կից ներկայացված հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան ֆինանսական հաշվետվություն), որը ներառում է 2025 թվականի տարեկան ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի ու գույքի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, տարեկան ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով պատրաստված են «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022թ. հուլիսի 22-ի N 04-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխան:

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կուսակցությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (այսուհետ՝ ՀՄԷՍԻ) կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԻ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Հանգամանքի շեշտադրում/ ֆինանսական հաշվետվողականության հիմունքը**

Մենք ուշադրություն ենք հրավիրում տարեկան ֆինանսական հաշվետվությանը կից «Հատուկ նպատակի հիմունքը» ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է ֆինանսական հաշվետվողականության հիմունքը: Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է Օրենքի և Որոշման ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, տարեկան ֆինանսական

հաշվետվությունը չի կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը, սույն հանգամանքով պայմանավորված, չի ձևափոխվել:

### **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության համար**

Կուսակցության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող դրույթների համաձայն տարեկան ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ տարեկան ֆինանսական հաշվետվության պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կուսակցության տարեկան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ տարեկան ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն տարեկան ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների՝ այդ Տարեկան ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող որոշումների վրա:


ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝


- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով տարեկան ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում/
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

նախագծելու, և ոչ թե Կուսակցության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար/

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

  
**Թաթուլ Մովսիսյան**  
Գլխավոր տնօրեն

  
**Ղուկաս Աթոյան**  
Առաջադրանքի ղեկավար



30 ապրիլի, 2026թ.  
ք.Երևան, Պ.Սևակ 8